

օջախում թաղեն, պահեն, որովհետև միւս աշխարհում կը պահանջեն:

Երկուշարթի օրը դժում փոխ չեն տալ, որովէսզի ամբողջ շաբաթ նոյնը չկրկնուի:

Չորեքշարթի և ուրբաթ օրերը ձեւ չեն անում, ապա թէ ոչ կայրուի:

Չմանագուստին, երբ արևի շոգերը տունն է ընկնում, կանայք խաշից կարում են և տանում պատից կացնում և երբ չորսնում է՝ պահում են, որ ամառը, երբ արևը նուռուրին այլէ, նրան քսննու առողջացնեն:

### ՆՃԱՆՑԻՈՐ ՏՕՆԵՐ

**Նոր-տարի.**—Տարեմտին (դեկտ. 31-ին) ամէն մի տաւն լուացք է անում, հաց թխում, (թէկուզ շատ էլ հաց ունենայ), փորրիկ, մարդակերպ հացիկներ պատրաստում՝ աշքերի, բերնի և կրծքին դրած ձեռքերի վրայ քիշմիշներ խրելով։ Մրանց կոչում են Ասիլ-ջասիլ և տալիս են երիխաների ձեռքը։ Զաւախրում սրանց միջոցով անուսղ գուշակութիւններն այստեղ յայտնի չեն։ Բացի սրանից, շինում են նաև կլկալ, կամ դուրսմ—կլոր րլիթ, մէջ տեղը ծակ։ Մրանք, որ իրը հացի հոր են ներկայացնում, նոր տարս օրն անց են կացնում զամէշի և եղան եղիքին, որովէսզի այդ տարին հորը լցուի ցորենով։

Հացը թխելիս, հետեւալ օբուայ համար պատրաստում են կերակրներ, որոնց մէջ լինելու է անշուշտ լորի և լորիզուր, այնպէս որ իրենք էլ առում են, թէ նոր տարին չի դալ տանց լորու։

Երբ հացը թխում, աւարտում են, վերջի երեք գունտի վրայ նշաններ են անում, յատկացնելով մինը ցորենի, երկրորդը՝ զարու և երրորդը՝ հաճարի նոր տարսւայ բերբին և ձգում թօնրի մէջ, կրակի վրայ, ապա հանում և նայելով թէ որը որչափ է ուռել, բերբի առատութեան վերաբերութեամբ գուշակութիւններ անում։

Փոքր ի շատէ ունեար տներում էլ գոզինադ են պատրաստում մեղրով ընկոյզից և նուշից։

Նոր նոր վերանում է այն, թերես զբաղաշտական կրօնից

մնացած սովորութիւնը, որ այս երեկոյ մի մեծ զերան են քաշ տալիս գլխատան մէջ, մի ժայրը գնում օջախը, իսկ միւսը շատ անդամ դռնից դուրս է ձգւում, որի պատճառով էլ դուրս բաց է մնում. (գիւղացու համար այս մի առանձին նշանակութիւն չունի, որովհետեւ հերթիկն էլ է բայց, առանձ երբէք չի տարանում). Այս զերանը, որին տարեմտի քիւթուկ են կոչում, այս երեկոյից մինչև ծննդեան երեկոն անընդհատ պիտի վառուի: Ենթադրան երեկոյին վերցնում են այս զերանից մնացած խանձողները, տանում հանգերում թաղում, որպէսզի թէ բերբը առատ լինի և թէ կարկուտը շխփի արարին: Միենայն ժամանակ այս խանձողից պահում են, որպէսզի կարկուտ եկած միջոցին դուրս ձգեն՝ և երկինքը խաղաղի:

Այժմ թէ ետք տարեմտի քիւթուկն այլ ես չեն վառում, բայց աշխատում են գոնէ այս գիշեր կրակն անշէջ պահել. մեծ քանակութեամբ փայտ են կոտորում և նոր տարու օրը ով ներս է գալիս, մի կտոր փայտ, գոնէ մի տաշեղ, է վերցնում և ձգում կրակի մէջ:

Տարեմտի կէս գիշերի մասին պատմւում է, թէ գետերը մի փոքր ժամանակ կանգ են առնում և ով այս միջոցում ջուր վերցնի՝ կուժը ոսկու կը գոխարկուի և թէ ով մի բան գնելով գետի մէջ խնդրի որ ուրիշ բանի փոխարկուի, իսկոյն կը կատարուի: Այսպէս՝ պատմում էին, թէ մի զիւղացի բահը դրել է գետի մէջ և ցանկանարով տսել, թէ ոսկի դառնայ, ասել է թէ փայտ դառնայ: Հանել տսեսէլ է, որ փայտ է դարձել: Այս հաւատով առաջնորդուելով այս զիշերը ջուր շեն դուրս ածում:

Նոր — տարու օրը տանտիկներ մի կարմիր շոր վերցրած զնում է դուրս, մի քիչ մեղք բռում տան դռանը և այդ կարմիր շորը մի անգամ փուռում, որպէսզի տարին քաղցր ու կարմիր, ուրախ անցնի, առա մի զիրկ փայտ է բերում, լցնում օջախը ապա շնորհաւորում որդիների, հարսների նոր տարին, բերաններին մեղք քաշում, երեխաներին միրզ և առիլքասիլ բաժանում. Տան տղամարդն էլ կլիալներն առած զնում է զոմը, գրան վերև մեղքով խաշ քաշում, զոմէշների աջ եղ-

ջիւրներին մի մի կլկալ անցկացնում, բերաններին միքիշ մեղր բռում և վերադառնում:

Եյս միջոցին ոփոռցը ձգած են լինում, պասուց կերակըրները շարած, մի շիշ օղի և մի զաւ զինի դրած։ Մօտիկները գալիս են նոր տարին շնորհաւորելու, նստում են տղամարդիկ առանձին, կանաչը առանձին, շատ անզամ տղամարդկանցից յետոյ, և հաց ուտում, օղի, զինի խմում, բարեմախտութիւններ անելով։ Յետոյ տան մեծը մի շիշ օղի առած զնում է՝ զիւղի տանուտէրի տունը, նոր-տարին շնորհաւորելու։ Սա ևս սփռոց է ձգած լինում, պասուց կերակուրներ, օղի, զինի շարած, հիսողին հրաւիրում է նստել, ուտել, խմել.

Ընդհանրապէս շնորհաւորում են հետեւալ կերպով շատ անզամ մի խնձոր կամ մի ընկոյզ տալով։ «Տարիի շնորհաւոր»։

— Տարի քի բոլոր, պատասխանում են ձեռքը բանելով։

Խսկ օղի խմելիս այսպէս են բարեմաղթում։ «Սաղ ըլլիք. ուրախութէնի տարի ըլլի. ցամաք աչքով, ուրախ սրտով ամէն տարի էս օրս հասնունք. ուրախութենով տարեմուտ ենք անում, ուրախութենով էլ սուրբ Յարութեանը արժանանանք, լի ու առատ տարի ըլլի. Աստուած մահին թանգութին տայ, հացին էժանութին։

Տանուտէրից յետոյ շատերը, թէկ ոչ բոլորը, զնում են իրենց ծխական քահանայի մօտ, տարին շնորհաւորելու, — բայց սրան իրը նուէր օղի կամ ուրիշ բան չեն տանում, մինչդեռ տանուտէրի համար պարտաւոր են տանելու։

Նշանադրուած երիտասարդներն անշուշտ օղի, թխուածք և մրգեղէն առած զնում են աներանց տուն, համբուրում աներոջ և զոքանշի ձեռքերը, օղին տալիս աներոջը, թխուածքը՝ զոքանշին. խսկ մրգեղէնը՝ հարսնացուին։

Վերջինս էլ շատ անզամ «փնջած խնձոր» է նուիրում իւր նշանածին, միայն ծածուկ։ «Փնջած-խնձորը» պատրաստում է ինքը իւր ձեռքով մետաքսեայ գոյզզոյն թելեր փաթաթելով մի կարմիր խնձորի վրայ, և զանազան կողմերում նոյն թելով փնջիկներ լինում։

Սռատաձեռն նշանածը որա փոխարէն ինքն էլ մի խնձոր է նուիրում, վերան արծաթեայ տասն կոպէկանոցներ խրած:

Մանամայրերն էլ իրենց քաւորներին ընծայ են տանում կամ ուղարկում օղի, զինի, մըգեր, թխուածքներ, առաւելապէս՝ բիշի, տոյաղներ, գուլպաներ և այլն.

Միքանի զիւղերում, ինչպէս Հաղբատ, երեսուները խըմբեր կազմած ման են գալիս աները ու միքիշ միքդ ստանալու յուսով երգում հետեւալը.

Կըտեր հոգը ինոգան փոշի,  
Մոծը զրէն ծալած ոսկի,  
Դուռը զրէն փերթ ըրեցնակ,  
Կաեր զրէն բոլոր լիսնիակ,  
Տան մները կերաններ,  
Ոսկէ կամար գերաններ,  
Բարի բիգուն ալէլուխա,  
Ա շէն, Հա շէն, Էս տունը շէն,  
Մին ու գերան սողոմ քաշէն:  
Տուն աւլողներ ջուխս ազունակ,  
Զեռնաւելը փունջ մանուշակ,  
Թորոնները խորաննի են,  
Հացթուկները խանում խաթուն,  
Էս տանը կայ էրկու լիգու,  
Մինը բարի, մինը չարի,  
Չարինը ընդի, բարինը ըստի,  
Բարին վէր զայ ձեզ հետ նստի,  
Բարով թող զայ ձեզ նոր տարի,  
Մուրազներուզ չիմ կատարի,  
Զեր տուն մանու հազար բարի,  
Անար, ցորեն, կորեկ, զարի:  
Լիքը հորեր շատ ունենաք,  
Կարմիր օրեր շատ ունենաք,  
Կարմիր օրով, կարմիր շորով,  
Ուրախ կենաք միշտ կուշտ փորով:

Ճնոմնդ Եւ մկրտութիւն.—Ենինդիան օրը քահանաները մեծ քանակութեամբ նշխարը են պատրաստում և երիտասարդների ձեռքով ցրւում ժողովրդին: Ստացողը բաժանողին

տալիս է երկու ձռւ կամ մի քանի ընկոյզ. Եյս սովորութիւնը վերանալու վրայ է:

Ճրագալոյցին Դանիելի վիրքը կարողում են չորս տպաներ, որոնց ծնողները պարտաւոր են յօզուտ եկեղեցու մի բան, օրինակ, մի քանի ֆունտ մեղրամամ և կամ դրամ տալ.

Ժամերգութիւնից յետոյ ամէն մարդ շտապում է մի կըտոր նշխարք առնել և տուն վերադառնալ ընթրելու, մանաւանդ որ մի քանիսն այդ օրը ժոմ են բռնած լինում:

Եյս ընթրիքը «ժամախսումն» է կոչում և սրանից՝ սոյն զիշերը «ժամախսման զիշեր»:

Ընթրիքին անշուշտ ձուկ է մատուցում:

Մի քիչ յետոյ զրագէտ մանուկներն առանձին, անզրագէտները առանձին խմբեր կազմած մկում են շրջել. առաջինները մտնում են աները «աւետիխ» տառմ, իսկ երկրորդները բարձրանում կտուրները, մի կողով քաշ անսւմ հերթիկից և երգում.

Բարի բիզուն ձեզ, ալելուխա,  
Հա ցնծացէք, ուրախացէք,  
Մեր Մարիամի պասը բացէք,  
Մարիամը զնաց էլի ծնունդ,  
Ծննդուեցաւ, ազատուեցաւ,  
Լուսաթաթախ մանուկ ծնեց,  
Մով ու ցամաք լուսով պատեց,  
Իւր խաչ որդին, իւր սուրբ հոգին,  
Բարուր կապեց էդ իր զոքին:  
Դեռ չէր հասել օխոտն օրական,  
Լեզուն բացեց, այսպէս խօսեց.  
—Ա մէր, ա մէր, Աստուածամէր,  
—Խնձ տար տուր Տէր Ռւհանին,  
—Ռոկէ բերան էն զահանին:  
Տարան տուին Տէր Ռւհանին,  
Ռոկէ բերան հայրապետին,  
Կուս զգեստով շուրջառեցին,  
Լուս մանուկը ձեռքը տուին,  
Գետ Յորդանան մկրտեցին,  
Ցիսուս մանուկ անուանեցին,  
Ողջ աշխարհը կանգնեց յուսով:

Հէնց որ դարձաւ տասը տարեկան  
 Ամենքին էր խիստ սիրեկան.  
 Երկու տարին վրէն անցաւ,  
 Տառնէրկուոք բոլորուեցաւ,  
 Դարձաւ մօր հետ, այսպէս խօսեց,  
 Քաղցր լեզուով խնդրեց, ասեց.  
 —Ա՛, մէր, ա մէր, Աստուածամբէր,  
 —Խնձի շուտ տար Երուսաղէմ,  
 —Մուրր գրքերից օգուտ քաղեմ,  
 —Միաք խմանամ, միաքս բանամ,  
 —Աստծու ճամփէն լաւ հասկանամ:  
 Մայրը առաւ, հետը տարաւ.  
 Ըստեղ նա շատ զրուց արաւ,  
 Վարպետներին հարցմունք արաւ,  
 Յազթութիւնը ինքը տարաւ,  
 Վարպետները խիստ բարկացան,  
 Տեղներիցը շուտ վերկացան,  
 Խորհուրդ արին նրա մասին,  
 Խորհուրդի մէջ այսպէս ասին,  
 Սա չի անիլ մեղ մոնթութին,  
 Սա մեղ կանի վարպետութին,  
 Ըրեցներին գանգաս արէք,  
 Աւագներին կաշառեցէք,  
 Եւ Մարիամին շատ զարգեցէք,  
 Իր որդու հետ յետ զարգեցէք:  
 Մայր ու մանուկ, որ իմացան,  
 Նրանք էլ ըստեղ շատ չը կացան,  
 Որդին տեսաւ մօրը լալով,  
 Լալով, լալով, մղկալով.  
 Դարձաւ տաւ նա իւր մօրը.  
 —Ոչինչ բան ա էս բոլորը,  
 —Ոչինչ, թէ որ ինձ չեն թողում  
 —Իմ հօր տանը, իմ հօր հոգումը,  
 —Բերան բանամ ուսուցանեմ,  
 —Բարի գործոց սերմեր ցանեմ,  
 —Բայց որ կը գայ, կզայ ժամը,  
 —Կառնուն դրանք իմ ուսման համը,  
 —Չիք կզառնայ չարակամը,  
 —Կը մօտենայ բարիկամը:  
 Մէր ու մանուկ շատ նեղացան,

Նրանք էլ այստեղ շատ չկացան։  
Մանուկն ասաց. — Գնանք մեր տունը,  
Ես կը կտրեմ աշքիս քունը,  
Մահ ու մանգաղ կը բանացնեմ,  
Կաթնով ազրիւր կը բղնացնեմ,  
Թօս ու քաջալ կը սաղացնեմ,  
Ես քեզ ընդով կը կերակրեմ։

Աւելի փոքրանասակները կարծ են կտրում ասելավ։

Բարբիգուն ձեզ, ալելուիա,  
Աշխն, աշխն էս տուն ա շխն,  
Մին ու գերան սոզոմքաշ են,  
Էս տանը էրկու օրօրոց,  
Մինը բարի մինը չարոց,  
Չարինը չարով կործանուի,  
Բարին բարով առաջուի,  
Տունը շխն, տունը շխն,  
Չեր պատիկի անըմն թնչ ա։

Տանից պատասխանում են օք. Արամ, Շեռշ,

Ցղաները շարունակում են.

Արամը կամ Անուշը գնաց մէրին,  
Եղ մտիկ արաւ իրան հօք կնանչը երին,  
Ձեռը շիրը տարաւ,  
Չալ ապասին չարը տարաւ,  
Մի պոչամ հաւ տուէք,  
Կամ մի ստիլ եղ ալելուէն տանի։

Թէ սրանց կողովի մէջ և թէ «աւետիս» ասողների պարկում ընկոյդ, մի երկու ձու, մի բանի կոպէկ են ձգում։

Ջրիստոսի մկրտութեան տօնը տեղական բարբառով պղոխնէրը է կոչւում։ Այս ժամանակ մի քանի զիւղերում հանդիսաւոր թափորով գնում են մօտակայ զետի ափը և այնտեղ «խաչը ջուրը ձգում», իսկ շատերում այս ծէսը կատարում են եկեղեցու մէջ, սեղանի վրայ ջրով լի մի կաթսայ դնելով։ Քաւոր լինողը պարտաւոր է յօզուտ եկեղեցու մի բան նուիրել։ Օրհնած ջուրն ահազին իրարանցումով լցնում են շշերի, ամանների մէջ, տանում տուն, մի մասը երեսներին, վէ բըերին քառում, որ սրբուն, տռողանան. մնացածը պա-

հում, որպէսզի այդ ջրով սրբեն պղծուած ամանները, այսինքն՝ որոնց շուն է դիտել կամ մէջը մուկ ընկել:

Ս. Սարգիս.—Առաջաւորաց պատին այս դաւառացիք ևս Ս. Սարգսի պատ են կոչում. Երիտասարդներից մի քանի սըն անսուազ, միւսները միաժում ծոմ են բանում, այսինքն, ունակ ամրող պատի ընթացքում բացի ջրից ոչինչ չեն ընդունում, իսկ միւսները օրական միմիայն մի անգամ, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, պասուայ կերակուրներ են ուսում:

Այս պատի ընթացքում իրը սպի նշան զլուխ շեն լուանում, սատպն շեն գործածում, ճախարակ շեն մանում և ծաներ աշխատանքներ շեն կատարում, նոյն իսկ եղջերուները տեղից շեն շարժում, սուսդ են պահում, ապա թէ ոչ մազերը կը թափուին:

Ուրբաթ օրը կը լուսուրակ են շինում, փոխինդ կամ փոխինձը (լուսած և երկանքով աղացած ցորենի ալիւր) մեղրով շաղախում և զլանի ձետին, յետոյ թաթախուում, այսինքն, առաջին անգամ ուսում, որպէսնետե նախընթաց հինգ օրուայ ընթացքում արգելում է փոխինդ գործածել:

Նոյն օրն Օձնեցիները դնում են Մտի զլիսի Ս. Սարգսի խաչը «ուշատ անելու», այստեղ մի քիչ զուր են ածում խաչի վրայ, ապա այդ խաչուայի ջրով և մեղրով փոխինդից կը լուսակ են շինում, իրենք թաթախուում և բերում անեցիներին էլ տալիս:

Այդ օրն անշուշտ փոխինդ գործածելու մասին իրենք գիւղացիներն այսպիսի բացատրութիւն են տալիս:—Պող (սպիտակ) ձիաւոր Ս. Սարգիսը ութ օր շարունակ կռում էր վրացիների (յունադաւանների) հետ. վերջին օրը ձեռքը տարաւ զրպանը, տեսաւ որ իրը պաշտը վերցրած աղանձը այնքան հարուել է իւր քաշած նեղութիւններից, որ փոխինդ է դառել, բռեց, լցրեց բերանը և շարունակեց կոփւը. Բայց յանկարծ որդին ձիու քամակից վայր ընկաւ. իսկոյն վրացիները յարձակուեցան վերան: Այս անսպասելի աղէտը տեսնելով և մուրազատու և պարեհատ» Ս. Սարգիսը՝ յուսահատ վայր իջաւ.

ձիուց, ընկառ որդու վերայ, զրկեց նրան և բացականչեց. Որդուս խաւարացրիք, եկէք ինձ էլ խաւարացրէք: Վրացիներն շտապեցին նրան էլ սովանել, իսկոյն «ճառագիտապած լիոք վըրէն վէր էկաւ, լիս էր՝ լիս դառաւ»:

Նոյն ուրբաթ զիշերը, շտփահաս երիտասարդները ու աղջիկներն «աղի բլիթ» (սաստիկ աղի, կլոր հաց) են ուտում և առանց ջուր խմելու քնում: Երադներում որ տղան որ աղջկան, և որ աղջիկը որ տղին տեսաւ իրեն ջուր տալիս, նրա բութէն է, — նախասահմանուած կողակիցն է դառնում: Եւ ելիէ ձեռին խնձոր ունենայ, դա նշան է որ հարուստ է լինելու:

Պառաւ կանաքը էլ նոյն զիշերը զռան առաջ մի սկսանդի մէջ մաղած փոխինդ են զնում, որպէսզի Ս. Սարգիսը իմէջ իրենց այցելէ, ձիու պայտի հետքը մնայ փոխնդի վրայ:

Ջարաթ առաւտեան այս գուրս զրած կամ այլ փոխինդով անշուշտ խաչիլ են անում, սատում: Շատերը ուխտ են զնում Ս. Սարգսի ուխտատեղիները, ինչպէս են Վարդարլուրի մօտ, Ծրդուկի գիւղի բարձրում, Օձուն գիւղի մօտ գտնուածները և այն:

Սւանդաբար պատմում են, թէ Ս. Սարգիսը փախցրել է Յունաց թագաւորի աղջիկը և երբ յոյները նրան հետել են, ուստիի բուք բարձրացնելով նրանց մոլորեցրել և շատերին խնդրել է: Եւ իբր թէ մինչեւ այժմ էլ ոխ պահելով ամէն տարի մի յոյնի կամ վրացու (որ նոյնակն յունադաւան է) խեղդում է:

Բարեկենդան. — Այս երկու շարաթուայ և մանոււանդ վերջի երեք օրերի ընթացքում թէ տղամարդիկ և թէ կանաքը աշխատում են լաւ ուտել, խմել և լաւ հագնուիլ ու գուբանալ: Հարսանիքներ առաւելապէս այս միջոցում լինելով՝ բոլորն էլ միջաց են ունենում հարսնքատանը հաւաքուելու, ուտել խմելու, զուարճանալու:

Բացի սրանից՝ հաւաքում են կալերը, զանազան խաղեր խաղում, զօտեմարտում, սպարում:

Պատահում են նաև բաւականաշափ հարբած մարդիկ,

որսնք սրան նրան վիրաւորելով պատճառ են դառնում կատաղի կոխների:

Զուարճանալը՝ ուտել խմելը հետզհետէ աւելանում է մինչև վերջի՝ կիրակի օրը:

Երբ արգէն լիովին յագեցած այլս շնն կարողանում ուտել, նախ տան մեծը, ապա միւսները «փակում են բերանները» ձուռվ կամ ձուաձեղով ասելով.

«Բերաններս փակում ենք սպիտակ ձուռվ, Սոտուած արժանացնի կարմիր ձուռվ բաց անելու»,

Մեծ պասի առաջին օրը կոչւում է «լուացարուք սրբացարուք»-ի և «կրծոնքի» օր: Սուածնի իմաստն այն է, որ այդ օրը բոլոր ամանեղինները պէտք է լուանան, սրբին և բերանքսիվայր զնեն, որպէսզի կարելի լինի պասի ընթացքում գործածել. Երկրորդի իմաստն այն է, որ մոյլ է արւում առաւելապէս անշափահանաներին և երիտասարդներին նախորդ օրերից մնացածները—կրճանները—ուտել, զերջացնել:

Սուաւուեան վաղ տան պառաւը մի սոխի կամ զետնախնձորի վրայ անց է կացնում եօթ հատ փետուր և երեխաններին ցոյց տալով առում.

—Ճատը գնաց շերեփը ծեռին,

Պապը եկաւ շոմբախն ուսին:

Ցեսոյ այդ մի փայտի վրայ ամբացնելով կախում են տան հերթիկից. Ըմէն շաբաթ մի փետուրը սղոկում են երեխանները մեծ ուրախութիւնով: Մրան տեղացինները «պապի պլոր» են կոչում:

Նոյն առաւուեան տան մէջ մի ճլորթի են ձգում, այսինքն մի թուկ ձգում են առաստաղի մի վերայի վերայով և ծայրերը միմեանց հետ հանգուստում. Ապա այս հանգուստած թուկի մէջ նստում են և առաջ ու յետ ճօնում: Փոքրերը մի քիչ ճօնուելուց յետոյ տան նանիին են բերում նստեցնում, որ «եղ անի».—Սա նստում է ճլորթու մէջ, մի քար դնում գոզը, հարսները փոխանակ ճօնելու, պատացնում են, թուկի ոլորտում է, յետոյ բաց են թողնում, թուկի ոլորդը սկսում է քանդուել և պառաւը պտոյա է գալիս առաջուայ հակառակ կողմը, Այս

միջոցին նա ձգում է զողի քարը մի կողմ, գետնին, ասելով. «Հարան եղ ինձ», Խոկյոն հարսներից մինը վերցնում է նոյն քարը և կրկին նանու զիրկը գնում, որ նորից ձգելով առում է. «Հարան եղ կա հարսին» և այսպէս շարունակ բոլոր հարսների համար, որպէսզի շատ եղ ստանան:

Եյդ օրը զրեթէ ամեն տուն ազանձ (բոված ցորեն) է անում. Սակա մարդ ամենից առաջ ազանձ է ուտում, որ բերանը չը հոտի և շրթունքը չը ճաքի. Պետք է նկատել, որ տանտիկինները հաշում են, որ մի զուցէ մեծ պասի ընթացքում այնքան անդամ մախուս չեփեն, որ զոյդ լինի, այլ անպատճառ կենտ, որպէսզի «օջախին մնաս չը գայ»:

Ուշադրութեան աւելի արժանին այն է, որ պառաւ կանայք աշխատում են այս մեծ պասի ընթացքում շարունակ վառ պահել օջախը. Պատճառը չգիտեն, միայն ասում են, թէ այս պասի ընթացքում կրակը հանգնելը շատ մեծ մեղք է. Ահա և՛ մի ուրիշ մնացորդ զրագաշտական կրծնի.

Հետաքրքրական է նաև այն, որ նորանարոնները կշուռում են իրենց ամուսինների հետ, կանգնելով իւրաքանչիւրը կը լինի մի նժարում, որպէսզի իմանան, թէ որն է ծանր:

Մնում է յիշատակելու միայն այն, որ շատերը գնում են միմեանց տուն շնորհաւորելու մեծ պասը և նոր խնամինները միմեանց պասուայ կերակրներից բաղկացած «սեղան» են ուղարկում:

*Ցեառնշնդառաջ.*—Լուեցիններն այս տօնին «գոռոտնչ-դռունչ» են ասում. Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ծերերն ու պառաւները եկեղեցաց մի մի վառած մոմ են բերում տուն և նրանով վառում ճրագները:

Սպաս երեխաններն ու երիտասարդները ծդօտ են հաւաքառում տան դռան առաջ և վառում: Եյս կրակը կոչում է դռունչ, Երեխաններն ու երիտասարդները թռչկատում են այդ դռունչի վրայով «որպէսզի հարինք չընկնին»:

«Դոռունջը» պահում, Ս. Մարգսի փոխնդի հետ խառնում և կարիստ դալիս դէպի երկինք են վշտում, որպէսզի

կարկուտը դադարի, և կամ բաղերի վրայ են շաղ տալիս, որ չխփի:

**Ժաղկազարդ.** — Ետպիազարդին Լոռեցիները կոչում են ծովարդաք: Կիրակի առաւօտեան շատ վաղ զանգակները հնչեցնում են և բոլոր գիւղացիները, մանաւանդ կանայք և աղջիկները, շտապում են եկեղեցի: Այս օր բոլոր տղջիկները անշուշտ եկեղեցի պիտի գնան իրենց մայրերի առաջնորդութեամբ: Կանապրուածները ձեռներին կլնալուար կոչուած մոմն են վառած բռնում, որպէսզի յայտնի լինին, որ նշանապրուած են:

**Զամուսնացած** երիտասարդները զնում ուռի ծառերի ճիւկեր են բերում եկեղեցի, որ քահանան օրհնի:

Այս օրհնուած ուռը դնում են ցորենի շանմարանները, որ հացն առատ լինի: Նոյն ճիւկերով հորեր են շինում և պահում, որպէսզի այդ տարի այդքան ցորենի հորեր ունենան:

Երեխաները ձեռներին ծնոռեր շրջում են զիւկում և ճրացնելով երգում.

**Ճեռ ճեռ ճըճենակ,**

**Ասծու հալալ պըպէնակ (թիթեռ),**

**Իմ հնգերը ծովն ընկաւ,**

**Մովը ծիրանի գառաւ:**

**Զէրէն (բազէն) էկառ կեռ կառուց,**

**Հաւը թառէն թոցրուց,**

**Ջուխտ ձուն տակէն պըցրուց,**

**Տարաւ կառեց բլցրուց.**

**Մինը ինձ, մինը իմ ընկորը.**

**Ով մեր փայը տայ զլարի,**

**Ով որ տայ ոչ սըլարի:**

**կամ**

**Ճեռ ճեռ ճըճանակ,**

**Ասծու գուռը բանանը,**

**Դուրսը չարուենք ժամ տանենք,**

**Ներսը պատարագ անենք:**

**Սև եղը մատաղ անենք,**

**Պողերը չարզախ անենք,**

**Տակին նստենք քարզեան անենք:**

մեռը փայտի ատամնաւոր զլան է, երկար կոթով։ Գլանի երկու կողմից 2—3 վերշոկ երկարութեան տախտակներ են անցկացրած, որոնք միանում են ուրիշ երկու տախտակներով, գոտիներով։ Մի ուրիշ բարակ տախտակ էլ մի ծայրով յնուում է զլանի ատամների վրայ, իսկ միւս ծայրով անցնելով երկրորդ գոտիով ամրանում է առաջի գոտու վրայ։ Գլանը պտուեցնելիս լեզուակը ընկնում է ատամից ատամ և սուր ձայն բարձրացնում։

Զարշարանաց շաբաթի ընթացքում կատարում են հետեալները։

Աւագ երեքաթի։—Երեկոյեան ժամերգութեան միջնին, երբ քահանան կարգում է յիմար և իմաստուն կոյսերի առակը, տասն երեխայի եկեղեցական շապիկ են հազցնում և կանոնացնում կարգացող քահանայի շուրջը։ Սպա մի ափօէի մէջ ածում են տասն կլորած թերթիկներ, որոնցից հնգի վրայ «իմաստուն», իսկ միւս հնգի՝ «իմար» խօսքերն են գրուած լինում։ Աւետարանի ընթերցումից յետոյ երեխաներին առաջարկում են մի մի հատ վերցնել այդ թերթիկներից և նայած մէ ում յիմար և ում իմաստուն է զուրս զալիս, նախատում կամ գովում են, հաւատալով, որ յիրաւի, նրանք այդ գուշակութեան համեմատ են լինելու։

Եթէ կանայք մեծ պասի ընթացքում «հաւաք» են ունենում, այսինքն մածուն կամ սեր են ունենում հաւաքած, այդ օրն անշուշտ հարում են, որովհեան «եթէ շիք չորեքշարթի հարեն, կը չըուի», այսինքն կանետանայ և ամբողջ տարին էլ կարագ թիչ և դժուարութեամբ կ'ստացուի։

Աւագ չորեք շաբաթի օրին շիք չորեքշարթի են կոչում։ Ըստ օրը մի քանի ձու են ներկում «շրի աշըլ հանելու համար»։ Ոմանը էլ իրենց եղունգների մէջտեղից մի որեէ քանօզ գիծ են քաշում, որպէսզի իրենց «քանը կիսատ-պոատ շմնայ, ոչ էլ իրենց բաղզը ուրիշին գնայ»։

Աւագ հինգաշաբաթի։—Բոլոր զիւղացիները տան են պահում։ Հաւատալով, որ այդ օրում տնկած ծառը, ցանած սեր-

մը բարեբեր և ուռճացող կը լինին՝ շատերը ծառեր են տընկում և սերմ ցանում:

Ոմանք էլ սև թելի վրայ եօթն հանգոյց են ձգում և դնում եկեղեցու պատի ճեղքուածքում, որպէսզի «թռչունները հաւերի ձագերը չփախցնեն»:

Երեկոյիան հարուստ տները մի մի քիչ կարագ են ու զարկում եկեղեցի՝ քահանային. Ոտնալուայի ժամանակ աւագ քահանան օրնուած կարազ է դնում ժամուոր տղամարդկանց մերկացրած աջ ոտերի և կահանց ձեռքերի վրայ, որ մեծ մասամբ աւազութեան կարգով ներկայանում են նրան:

Օրհնած կարագը բաժանում են ժողովրդին, որ խլիլելով աշքերին, ճակատին և երեսին են քսում:

Ժողովուրդը կարծում է, թէ այս զիշեր հրէաները խմորից Քրիստոս են շինում և շարչարում, քրիստոնեայ երեխայի բռնում սպանում են և նրա արիւնով հաց թխում, ուտաւում:

Հինգշարթի զիշերը դարբիններն անխօս շինում են ուրբաթարուր — կեռ երկաթ — որ կարմիր ու կանանչ (թելով<sup>\*</sup>) կարում են երեխաների ուտերին, որպէսզի շար աշքից ազատ մնան:

Ոմանք էլ չորս մեխ են շինում և պահում մինչև կանանչ կիրակին, երբ մի ուշ են մատադ անում և սրա ոսկորները մորթու մեջ փաթաթած թազում են և այս մեխերը վրայից խփում, որպէսզի կարկուտ չը գայ:

Աւագ ուրբաթին Ութի (Յուղի) Ուրբաթ են կոչում, ծունք չեն գնում, որովհետեւ Քրիստոսը խաչին է, խաչ չեն հանում՝ որովհետեւ Քրիստոսը խաչուած է, դրամ փոխ չեն տալիս կամ առնում՝ որովհետեւ Քրիստոսը զրամի համար է մատնուած:

Այս օր ևս ձու են ներկում, որպէսզի Յուղայի աշքը տընդառնի:

Կանայք բաղարջ հաց են թխում տան իւրաքանչիւր անգամի համար մի հատ, զատերն էլ ննջեցեալների համար

<sup>\*</sup>) Ոմանք այս թելը գրուանում գրած առնում են եկեղեցի, չպատարագին շանց տալիք:

և անուն անուն թխում են և տալիս հարեաններին, աղքատներին. Այս, ննջեցեալների անունով թխուած բազարզները ամեռելափայտ են կոչում:

Չատերն ևս բանջար են եփում, որպէսզի դրա ծակող դօրութիւնը ոչնչանայ, որովհետև Քրիստոսին բանջարով են ծեծել:

Շաբաթ օրը շատերը ծոմ են պահում մինչև երեկոյեան ժամերգութիւնը և հաղորդուում:

Անհամբերները զբաններում կարմիր ձուեր դրած գալիս են եկեղեցի և հէնց որ քահանան «Առէք, կերէք, այս է մարմին իմ» է ասում, սրանք ոկտում են ուտել ձուն:

Ընթրիքին անշուշտ փլաւ և տապակած լորի են լինում, միայն խէշ լորի, այսինքն տմառը դեռ կանանչ ժամանակ քաղած և անմիջապէս չորացրած:

Զատուկ. — Օձունում պատարազից յիտոյ ժամուռները զուրս են գալիս եկեղեցուց և շրջապատում Սմբատ թագաւորի գամբարանը, մի քանի գիւղացիներ բարձրանում են նրա աստիճանների վրայ և երգում հնտեղալը, որի իւրաքանչիւր տան աւարտին բազմութիւնը ձայնակցում է երգելով.

Օրհնեալ է Աստուած, օրհնեալ է Աստուած, օրհնեալ է Աստուած,

Օրհնեալ է հայրն Աստուած, Որդին Աստուած, Հոգին Աստուած:

Մեզ աւետիք, ձեզ աւետիք,

Մեզ և ձեզ մեծ աւետիք,

Զի տէրն յարեաւ ՚ի մեռելոց,

Ազատութիւն իւր գերելոց: (Օրհնեալ է Աստուած:)

Օրհնեալ է երկմնքն ու երկիր,

Սէրովրէք և Թէրովրէք,

Հրէշտակք և հրեշտակապետք,

Ռամիկք և շինականք,

Արք և կամայք, ծերք և աղայք,

Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց,

Ազատութիւն ես գերելոց,

Մեզ աւետիք, ձեզ աւետիք,

Ձեզ և մեզ մեծ աւետիք: (Օրհնեալ է Աստուած:)

Նախահայրն գուշակեալ 'ի մարզարէից,  
Անարգեալն 'ի հրէից,  
Հայհռյեալն 'ի քահանայապէտից,  
Ըմբռնեալն 'ի փարիսեցւոց,  
Մասնեալն 'ի պիղծ Ցուզայից,  
Խաչապէն 'ի Պիղատոսէն,  
Խոցեալն 'ի զինաւորէն,  
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց,  
Ազատութիւն ետ գերելոց,  
Մեզ և ձեզ մեծ աւետիք: (Օրհնեալ է Աստուած),

Օրհնեալ է սուրբ Երրորդութիւն,  
Վենձութիւն, բարձրութիւն,  
Թագաւորաց հաստատութիւն,  
Գերելոց ազատութիւն,  
Հիւանդաց ազատութիւն,  
Քրիստոնէից հաստատութիւն,  
Մեզ մեղացն թողութիւն,  
Ննջեցելոց արքայութիւն,  
Զի աէրն յարեաւ 'ի մեռելոց,  
Ազատութիւն ետ գերելոց,  
Մեզ աւետիք, ձեզ աւետիք,  
Մեզ և ձեզ մեծ աւետիք: (Օրհնեալ է Աստուած),

Օրհնուի և գպահպանուի  
Զեր զաշան ու սարը, այն ու ոչխարը,  
Կովն ու կթանը, չութն ու գութանը,  
Վարն ու վաստակը, զլուխն ու տակը,  
Հանդն ու հանդաստանը, արօտն ու այգեստանը,  
Կալն ու չաղացը, ցորէնն ու հացը,  
Զին ու էշը, եզն ու գոմէշը,  
Գոնարածն ու հորթարածը,  
Ցուարածն ու խոզարածը:

Այս երգից յետոյ եկեղեցու առաջ բաժանում են «Ժուր-  
քատարուկը» և «ախարը»: «Ժուրքատարուկը» հասարակութիւ-  
նից հաւաքած զրամով գնուած մի մատաղ խողի միսն է, որ  
եկեղեցու դռանն եփում և մի քիչ տալիս են եկեղեցուց  
դուրս եկողներին, որ ուտեն և սրանով ցոյց տան, որ թուր-  
քերի վրայ յաղթանակ են տարած, արձակ համարձակ ուտելով

խոզի միսը։ Խոկ «ախարը» նոյն դրամով գնած եղի կամ կովի միսն է, որ հում հում բաժանում են բոլոր զիւկացիներին։ Խոկ քահանաների և միքանի պատուաւոր մարդկանց համար սոյն մօից կիրակուր են պատրաստում և հիւրասիրում եկեղեցու մօտ զանուած տներից մինում։

Եյնունեան շատերը միմնանց այցելում են շնորհաւորելու զատիկը, միմնանց կարմիր ձու նուիրում, «վրկտանուկի» և «թղուանուկի» խաղում, մանաւանդ անչափահասները։ Կրկտանուկին այսպէս են խաղում։ Նախ ձուերի ծայրերն ատամներին խփելով հանած ձայնից ենթազրութիւններ են անում, թէ որ ձուն աւելի կարծր է։ ապա մինը ձուի ծայրը վեր ցցած բռնում է, խոկ միւսն իւր ձուի ծայրով խփում այդ ձուի ծայրերն, եթէ կոտրում է, դարձնում են միւս ծայրը, որը կոտրելուց յետոյ զրաւում է ձուն, խոկ եթէ իրենն է կոտրում հէնց առաջնին խփելին՝ այն ժամանակ ոտք է բռնում իւր ձուի միւս չկոտրուած ծայրը և առաջնը խփում է, եթէ կոտրեց զրաւում է, եթէ ոչ՝ այն ժամանակ ոտք է խփում։

«Թողանուկի» խաղալիս էլ, մի զարկվայր տեղից հերթով զլորում են ձուեր, երբ մինի ձուն զիւլչում է մի ձուի, ոտք զրաւում է բոլոր զլորուած ձուերը։

Այս օր զերգաստանների մեծերն ցերեկը շնուրում, սրպէսզի ամառն անձրնեացուրը կալերը շըշի։

Զատկի հետեւալ օրը, երկուշաբթի, մեռելոց է, բոլորը վնում են գերեզմանատուն իրենց հին և նոր ննջեցեալների գերեզմաններն օրնենել տալու։

Հետեւալ երեքշաբթի օրը ժողովուրդը կիրակի է պահում անուանելով «վարկտի հուքմի», որպէսզի կարկուտը ապազային շնորհի իրենց արտերին և ցանքսերը ոչնչացնէ։

Տարեցաբթի օրն էլ «Մկան հուքմի» է, տօն են պահում, որպէսզի մկները շկտրեն արտերը։

Խոկ հինգշաբթի՝ «Ցեցի հուքմի»։ Ռաւեւալապէս կանայք են պահում, որպէսզի ցեցը չուտէ նրանց թերերն ու բրդեայ զործուածչները։

Կրկնազատկին Լոռեցիները Կանանչ կիրակի են ասում և

այս օրն ահազին քաղմութիւն ուխտ է գնում Արդուի Ս. Յոհանն Օձնեցու մատուռը,

Ցինանց իններորդ օրից սկսած մինչև համբարձում իր կանայք և իր տղամարդիկ արեք մայր մտնելուց յետոյ այլև շեն աշխատում, որպէսզի հաւկուր շլինին, այսինքն երեկոները բոլորովին կամ վատ շը տեսնեն.

Սյօ օրից նաև մինչև վարդավառ երկուշարձի օրերը ևկարկտի հուքմին են պահում, որպէսզի կարկուտը չը խփէ արտերին և վնասէ.

Համբարձում.—Զորեցաբթի առաւտեան շատ վաղ տան մեծերը գնում են դաշտերը, քաղում սիրի-սիրի, աստղ-փուլ ու աւելուկի ժուփ և բերում գնում կաթնով լի ամանի վրայ, որպէսզի ևկաթը առատ լինի»:

Ճաշից յետոյ հարս ու աղջիկ հաւաքւում են մի նորահարսի տուն և այնտեղից միասին գնում դաշտերը, ծաղիկ քաղսում, բերում նոյն տանը վիճակի երգեր ասելով վնջում և շինում խաչվնջեր, ձիաւորափնջեր, սիրափնջեր.

Ապա եօիժն կամ երեք աղջիկներ վերցնում են մի կճուճ և անխօս գնում եօիժը տեղից ջուր և աւազ են վերցնում, բերում մի մեծ փունջ էլ մէջը ձգում և մի կարմիր շորով բերոնը փակում:

Ոմանը հաւաքում են ծաղիկների վրայից առաւտեան ցողը և այն լցնում վիճակի կճուճի մէջ.

Երբ վիճակի կճուճը պատրաստ է լինում, աղջիկներն առնում են ձեռները և վիճակի երգեր ասելով խաղացնում, ապա տանում հանդերում թաղցնում, որպէսզի եղնարած տըղաները չը գտնին, ապա թէ ոչ փրկանը կը պահանջնի:

Վիճակի կճուճը գիշերը անշուշտ դուրոը, ասողերի տակ պիտի մնայ, որպէսզի ենթարկուի ասողերի զօրութեան:

Նոյն գիշերը մի քանի աղջիկներ անքուն հօկում են, որ շարաճնի տղաները չը զան և իրենց փնջած ծաղիկները չը գողանան, այս հանգամանքից էլ յառաջացել է «ծաղիկ ես պահում» դարձուածքը, որ առում են երկար ժամանակ արթուն մնացողին:

Հետեւել առաւօտ, հինգշաբթի, աղջիկները նորից հաւաքում են և տանում վնջերը աների հերթիկներից վայր ձգում. Տնեցիներն էլ իւղ, կարագ, բրինձ, պանիր, ձու են ուղարկում այս աղջիկների խմբին, որ այդ պաշարեղէնով ճաշ է պատրաստում և ուտում, ուրախանում, երգում, պարում:

Ճաշից յետոյ այս աղջիկները գիւղացի կանանց և տղամարդկանց բազմութեան հետ գնում են մի կամ կամ դաշտ, ուր մի փոքրիկ աղջկայ դլսին ձգում են մի քող, նոտեցնում իրնեց շրջանի մէջ երեսը դէպի արենելը դարձրած և դիճակը դնում նրա գիրլը. Այս ժամանակ հանդիուականները մի մի նշան, մատանի, կճանակ, մեխս և այլն, են ձգում վիճակի մէջ:

Սպա աղջիկները վիճակի երգեր են երգում և իւրաքանչիւր երգից յետոյ վիճակի «հարու» մի նշան է հանում. Նըշանի տէրը երգուած վիճակից պաւշակութիւններ է անում:

Վիճակի շրով ես դուշակութիւններ են անում, միայն ոմանք վիճակ հանելուց անմիջապէս յետոյ, ոմանք հետեւել օրը, ուրբաթ առաւօտեան:

Վիճակի շրից ածում են մի մատնոցի մէջ, երկու բթամատերով բռնում, շրի մէջ մի փոքրիկ ծղոտ (ծեղ) ձգում, եթէ սա դէպի աջ պատուի, հառկը առատ կը լինի, իսկ եթէ ձախ՝ սակաւ:

Ուրիշներն էլ նոյն զրից ածում են մի բաժակի կամ փոքրիկ թասի մէջ, որը չորս հոդի բռնում են իրենց աջ ցուցամատերով և կամ երկու հոգի՝ իրենց չորս ցուցամատերով. ապա պայման են դնում, թէ բաժակը կամ թասը թող աջ պատուի եթէ այսինչին այս տարի նշանելու ենք, եթէ այսինչի նշանածը շուտով զալու է, եթէ այսինչը արու զաւակ է ունենալու, եթէ այսինչի հիւանդութիւնը այսինչ խաչիցն է և այլն:

Վերափոխուան սուրբ Աստուածածնի. — Մի առանձին բան չի կատարում, միայն Օձնի շրջականներից ուխտ են գալիս Օձնի Ս. Աստուածածին կամ Խաչգունդ եկեղեցին:

Վարդավառ. — Այս առնը աւելի լաւ եայլաներումն է

տօնւում բան գիւղերում։ Ծարաթ օրը հորթարածները ժադիկներ են քաղում, մինչում և հորթերի ու կովերի վզից կապում։ Հետևեալ առաւոտ, կիրակի, այս հոտաղները ժադիկիցները ձեռներին շրջում են և ժադիկափայ իւղ հաւաքում, տանում ազգակ եփում, ուտում, ուրախանում։

Հոգիւներն էլ այդ կիրակի օրը մի խոյ են ներկում կարմիր գոյնով, ծաղիկներով և զանազան կտորներով զարդարում և անէ տուն ման ածելով իւղ են հաւաքում, ուրախութիւն անում։

Սզցիկներն էլ ժադիկներ են հաւաքում, փնջում, տնէտուն բաժանում և ժադիկափայ հաւաքում, միասին եփում, ուտում, ուրախանում։

Երրեմն էլ այս ազցիկները վիճակ են շինում և հանում ինչպէս համբարձմանը։

Լուս զբթէ բոլոր գիւղերից ահազին բազմութիւն ուխտ է վնում Վարդարլըի մօտի Ս. Մարգիս ուխտատեղին,

